



ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ք. ՏԱՐԻ, ԹԻՒ 77

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱՄԱԹ, ԱՊՐԻԼ 29 1899

ԳԻՆ 3 ՍԵՆՑ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՇՐՋԱՔԵՐԱԿԱՆ

Առ համարէն առաքելաբար Հայ ժողովուրդն Ամերիկայի

Սիրելիք

Ամերիկայի առաջ Պոլսոյ և Կովկասի ազգային լրագրողները գուժեցին թէ Տաճկաստանի հայաբնակ գաւառացի ուսանց, մանաւանդ վանի մէջ, շափաղանց աղքատութեան և հացի թանձութեան պատճառաւ սովատանջ կը մեռնին շատերը ի մերայնոց, թէ ոմանք թիւնուոր խոտերու արմատներ և անբնական իրեր սնունդի համար գործածելով՝ սեռակ սեռակ հրահրուածեանց ու մահուան կենթարկուին, թէ շատեր յուսահատութենէ անձնասպանութեան փորձեր կընեն՝ իրենց անտանելի կացութեան վերջ մը տարու համար, և թէ Հայ գիւղացիք խմորով կը կրծնափոր լինելով կը գիմին օտարաց գիրկը՝ փրկելու համար իրենց և իրենց զաւակաց կեանքը:

Մեր Հայրենեաց այս չարաչաք կացութեան հանդէպ Առաջնորդարանս ցարդ լուռ և անզօր չպիտի կենար անշուշտ: Ըստ որում օրէնք պաշտօնէից գործել միշտ ի բացառիկ դէպս վերագոյն իշխանութեան հրամանաւ, կ'ապառնէինք Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց Հայրապետին, կամ Ս. Պատրիարք հօր պաշտօնական հրամանին՝ հանգանակութեան ձեռնարկելու համար: Արդ որովհետև ուշացաւ այդ հրամանին գալուտը, և տեսնելով մէկ կողմէն Միացեալ Նահանգաց այլ և այլ հայաբնակ վայրերէն եկած թախանձանքները ի նպատակ վանի սովատանջ ազգայնոց հանգանակութեան ձեռնարկելու, և միւս կողմէն նկատելով թէ աղէտը մեծ է և անմիջական օգնութեան պէտք ունի, կուգամ այսու շրջաբերականաւ ծանուցանել ամերիկայեան համայն ազգայնոց, թէ ընդ շրջաբերական յանձնարարած եմ շրջաբերական յանձնարարած Գեր. Հովուաց, Պատ. Հոգաբարձութեանց և Մեծ. Գործակալաց, որպէս զի անյայտազ ձեռնարկին հանգանակութեան իրենց յարմար դատած եղանակաւ: Արդիւնքը որչափ հանգանակչաց բոլորանուէր աշխատութենէն՝ նոյնքան և աւելի ժողովրդեան բարի կամեցողութենէն և խղճամիտ արամադրութենէն կախում ունի: Ուստի կարօտելոյ իսկական վիճակը ժողովրդեան ներկայացնելու նպատակաւ՝ հարկ կը համարիմ Ամեն. Ս. Պատրիարք հօր հազիւ երկու ամիս առաջ յղած պաշտօնական շրջաբերականի մէջ աղէտին ծանրութիւնը պատկերացունող մասը գետնի վրայ:

Ներքին և արտաքին հանգանակութիւնք վերջացած, նպատանքն իրարմ, հազիւ կարելի կը լինէր մեզ ազգովին բացուած որբանոցներու ամսական նպատանքներն մեծ ծրագրով հայթայթել և հազարաւոր ան-

տէրուով մանուկներէն փոքրիկ խումբ մը պատուաբեր, և ահա՛ սովատանջ օրհասականներու համար օգնութեան աղաղակներ կը հասնին մեզ, մինչդեռ միջոց չունինք մեք անոնց նըպատելու և կեանքը փրկելու: Ներքին գաւառներուն շատերուն մէջ նոյն ողբալի տեսարանը կը պարզուիրայց մանաւանդ վանայ կողմերը աղէտն ահռելի է. անտուղ մեռնողներու անուններ ու ցանկեր կը հաղորդուին մեզ, յուսահատութենէ իրենց կեանքը կարճեցնելու փորձողներ կը գտնուին, տուն և ընտանիք լքանելով փախչողներ ալ կան, խոտի արմատներ և անբնական իրեր սնունդի սեղ կը գործածուին, այս ձմրան եղանակին՝ կրնան ու աղջիկներ իրենց մերկութիւնը հազիւ ծածկած մագիթուրով մը սար ու ձոր կը թափառին՝ վայրի խոտերով սնունդ հայթայթելու համար: Այս աղէտներու դարման տանելու և ժողովուրդը սպառնալից վտանգներէ փրկելու համար՝ մեր միջոցն ու ապաւէնը բարեհաճ անձներու գթութիւնն ու օգնութիւնն է: Այնչափ աւելի հարկ է մեզ փութացնել և յաւելուլ այս օգնութիւնը, որքան օտար դաւանութեանց քարոզիչներ. ինչպէս գուցէ ալ լսած էք արդէն, պատեհ առիթ կը սեպեն մեր Ս. Եկեղեցւոյ հարազատ գաւառացի խղճին վրայ ալ ճշնշում ի գործ դնել և ստիպել գանձը կրօնի փոփոխման պայմանով փոխարինելու նպատանքներ, հակառակ այն բարեհաճ ու սղորմած օտարագրողներու զգացմանց, որք զուտ մարդասիրական նպատակաւ դրած են այդ նպատանքը անոնց տրամադրութեան ներքեւ:

Սոյն պաշտօնական աղէտարջ տեղեկութիւնները ո՛ր և է տարակոյտի տեղի հերթ թողուր և այնքան ազդու են, որ ուրիշ ու է յորդորականի պէտք չի մնար: Ուստի կուգանք յաւելուլ միայն թէ՛ կատարուած պաշտօնական վիճակագրութիւնը կը հաստատեն որ 12,000 ստուարթիւր ժողովուրդը մը այսօր սովատանջ կը տառապի վան նահանգի մէջ, և զբթութիւն կը հայցէ ամեն խիղճ ունեցող մարդէ, մանաւանդ համազգի եղբայրներէ: Այո՛, Հայ եղբայրներ, ումենէն աւելի մենք պարտինք սիրել զանոնք և գթալ նոցա վրայ. թէ՛ բնական և թէ՛ Աստուածահրաման պարտիք մ'է այս. «Եթէ ոք իւրոց մանաւանդ ընտանեացն խնամ ոչ սանիցի՛ ի հաւատոցն ուրացեալ է և չար ևս քան զանհաւատն է» կ'ըսէ Ս. Պօղոս առաքեալը: Մեր ազգային մեծ ընտանիքին գաւակներն են այդ սովատանջ հայերը. զայս ի յուշ անելով՝ կըռնեցէք ձեր տալիք նուէրը և այնպէս յանձնեցէք հանգանակչաց յիշեցէք նաև թէ՛ ի՛նչ զգացմամբ և շափով որ տայք, նոյնչափով ալ պիտի տրուի ձեզ:

Մաղթելով որ Ամենաբարին Ած. առատացնէ ի ձեզ ցհոգին սիրոյ և գթութեան: Մնամ Աղօթարար ՅՈՎԱԿԻՄ ԵՊԻՍ. ԱՄԵՐԻԿԱՅԻ 20 Ապրիլ, Ուսթըր:

Բ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Մանիլայէն վերջերս հոս եկող Բայա մարտնաւին հրամանատարը երեկոյթի մ'առթիւ ըրած մէկ բանաստեղծութեանը ընթացքին մէջ հեքնական ակնարկներ նետած է Գերմանիոյ կայսեր անձին և թէ Մանիլայի մէջ եղող Գերմանական նաւատորմին վրայ: Գերմանիոյ Ուաշինկթընի դեսպանը պաշտօնապէս ներկայացրէ է Արտաքին Գործոց պաշտօնէին և վերի ակնարկութիւններուն մասին իր կայսեր շատ զայրացած ըլլալը յայտնէ, որուն պատասխանուեր է թէ. «Ընտանեկան շրջանակներու մէջ արատասնուած խօսքերը պէտք չէ որ դուրսնաբերուին խղճարի նիւթ մատակարարին. Հետևարար Միացեալ Նահանգաց կառավարութիւնը պաշտօնապէս պատասխանատու չձանձնար ինքզինքը այդ գէպքին համար»: Ըսուեր է միանգամայն թէ՛ նաւային պաշտօնեան արդէն այդ խնդիրը ձեռք առած է և հարկ եղածը պիտի տեսնուին՝ հարկաւոր տեղեկութիւնները և բացատրութիւնները ստացուելէ ետքը:

Թիւրքի թէ՛ այդ միջոցէպը հոս պիտի փակուի:

Թիւրք կառավարութիւնը վրեւոյրական մեծ պարտատուութիւններ կը տեսնէ: Թիւրքիոյ այս նեղ տեսիլին այդքան գինուորական ծախքերը ընելը խաղաղութեան համար լաւ նշան մը չէ:

Մակեդոնիոյ և Եմէնի մէջ ապստամբական ճարձատող բոցերը իջած են, սակայն անոնց կայծերը մուխի տակ պահուած կը մնան: Օր մը հով մը կը փչէ, կայծերը կը ցրուուին շորս գին և հաւաւր հրդէհէր նորէն կը ծագի: Ծառ հաւանական է որ Մակեդոնացիք պետութիւններու խաղաղութեան համաժողովին կանանց սեղանին շուրջը փառաւոր հրախաղաղութիւն մը պիտի ընեն, որ շատ ալ կատակ չպիտի նմանի:

Թիւրք կառավարութիւնը, իբր թէ, ալ որոշեր է Մակեդոնիոյ մէջ պահանջուած բարենորոգումները ներմուծել:

Սուլթանը Անգլիոյ և Գաղիոյ գեապանատուները ծանուցագիրներ ղրկելով՝ բողոքեր է այն անիրաւութեան դէմ, որ այդ երկու պետութիւնները գործեր են՝ Ամերիկայի մասին իրենց ունեցած համաձայնութիւններուն մէջ զնեկով Թիւրքիոյ պատկանող հողերն ալ:

Այդ ծանուցագիրը պատրաստուելէն ետքը Սուլթանը, անուշտ, կուշտ մը խնդացեր է, ազատելով քարտուղարը իր խնդուքը զսպելու սագնապէն:

Ռուսիա բացի իր երկրին մէջ եղող Հայ գաղթականներու վերադարձին ու անոնց ապահովութեանը համար ըրած պահանջներէն, երկու անգամ շատ զօրաւոր գեկուցումներ տուած է Գրան՝ Հայաստանի մէջ տիրող անկարգութիւններու մասին:

Այս երեկոյթը քաղաքական հանգամանքէ զուրկ չնկատուիր: Մենք անակնկալէ մը չպիտի զարնուինք՝ եթէ անոնք թէ խաղաղութեան համաժողովին մէջ Հայկական խնդիրը կը յարուցուի նոյն իսկ Ռուսիոյ կողմէ:

Թիւրք ցեղեր սկսեր են Ռուսիոյ սահմանէն ներս անցնել և հոն աւարառութիւններ ընել: Այս մասին ալ Ռուսիոյ գեապանը Գրան ծանուցագիր մը ղրկեր և ըսեր է թէ՛ եթէ Թիւրք կառավարութիւնը չի կրնար Թիւրքերը զսպել, Ռուսիա իր վրայ պիտի առնէ այդ գործը:

Տակաւ առ տակաւ կը տեսնուի թէ՛ խաղաղութեան ժողովին մէջ Ալգաս—Լօրէնի և Եգիպտոսի խնդիրներուն պէս խնդիրներ պիտի յարուցուին: Երբ այդ կարգի խնդիրներ օրակարգի մէջ անցնին և վիճուին՝ շատ հաւանական է որ Հայկական խնդիրն ալ ինքնիրեն երևան գայ, որովհետև ինչպէս անցնելոյն մէջ տեսանք, Հայկական խնդիրը մէկին չէ՛ մէկին փաստին պիտի ծառայէ, գործին պիտի գայ. ուստի շահագործումի համար սեղանի վրայ պիտի դրուի: Արդիւնքն անշուշտ բան մը կը լայ՝ եթէ ժողովը արդիւնքի մը հանգի:

Փիլիպին կղզիներուն մէջ քանի մը օրէ ի վեր է որ տաք ճակատամարտներ ճակատամարտներու ետեւէ կը մղուին: Ամերիկեան զօրքերը դիւցալանական քաջագործութիւններ կընեն: Գրանի սեղանի վրայ արուարած և մեռած ընկերները վերցուցեր ու տարեր են՝ անդատարար գնդակներու տակէն:

Երէկ Ամերիկեան բանակը ցարդ Փիլիպին արշիպելագոսին մէջ նըմանը շտեմնուած կատաղի կռուի մը բռնուեցաւ արսատմբներուն հետ: Ի զարմանս Ամերիկացւոց, ապստամբներու կողմանէ երկու տեղերէ թընդանօթ արձակուեցաւ. սակայն տեսնուեցաւ որ անոնց ետեւ վարժ գործածողներ չկային: Ապստամբներու վերջին ամուր քաղաքը գրաւուեր է. ապստամբ բանակը անհնալ պաշարուած է Ամերիկացւոց կողմանէ, որ կը յուսացուի թէ կարող չպիտի ըլլան լեռները փախչելու ու անձնատուր պիտի ըլլան: Այսու ամենայնիւ Փիլիպին արշիպելագոսի գործերը Ուաշինկթընի կառավարութեան մեծ մտահոգութիւն կը պատճառեն: Երէկ Նախագահը խորհրդակցութեան կանչեր է ընդհ. հրամանատար զօրավար Մայլը. կ'երեւի թէ մտադրութիւն կայ զայն փիլիպին կղզիները ղրկելու, որ անձամբ հսկէ այնտեղի բանակին վրայ եւ ուղղէ կռիւները:

ՏԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ

ՏԵԳՐԻՍԻ ՏԿԱՐԱՆԸ ՓՈՒՍԱԳՐՈՒԵՑԱՆ:

Նամակ կամ ծրար ղրկել հետեւեալ հասցէին:

Q. B. CHUTJIAN 301 E, 34th St, N. Y. City



ՇԱՐՍԱԲԱՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՈՒՆՔԱԿԱՆ... Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրերը...

ՄԻԱՏԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒՆՕՍՏ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ... ՔՈՒՆՔԱԿԱՆ ԳՐԱՄԱՍԻՅԱԿ ՆԱՄԱՐ 10 Ֆրանք...

Տարեկան 1 50, Վեցամսեայ 75, Եռամսեայ 40...

Մտնուի կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝ To the DICKRIS PUBLISHING CO., 301 East 34th St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱՐՍԱԲ, ԱՊՐԻԼ 29, 1899.

ԳԱԶԹԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ՄԷՋ ՃԱՐՍԱԿԵԼ ՍԿՍՈՂ ԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ՝ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՒ ԳՈՐԾԱՆՆԵՐԸ

ՏԻ ԳՐԻՍ-ի անցեալ թուով ջանացինք, շատ համառոտակի, ցուցնել թէ կարգ մը ահաբեհի ապականութիւններ...

Եթէ գաղթականութեան պատուէն ու բարեկրօնութեանը նախանձախնդիր ձեռքեր՝ իմաստուն դարմաններով լեցուն՝ շուտով երևան չգան և փրկարար գեր մը...

Հիւանդութեան մը դարմանը գտնելու նախնական միջոցն է՝ անոր պատճառները գիտնալ։ Ի՞նչքա՞նք ալ վերի սըլուր...

Կենդանի մարմիններ փոտութեան ենթակայ կըլլան՝ երբ կեանքն անոնցմէ կը բացակայի։ Ժողովուրդը մը կեանքի զրկումը վիճակները շորս են...

Թուեմք պատճառները։ Ա.— Ազգային յոյսի մարտիլը։ Աստեն մը ազգային կեանքի ու գործունէութեան ետ հետեւեալ անոնք մէջ՝ ազգային...

Աստեն մը ազգային կեանքի ու գործունէութեան ետ հետեւեալ անոնք մէջ՝ ազգային յոյսերու կրակովն ու բոցովը վառուած։ Չարքերը մարեցին այդ յոյսը և պաղ ջուր մը լեցուցին ազգային կեանքի և գործունէութեան ետ հետեւեալ անոնք մէջ՝ Գանի ազգային կեանքը յոյսերով կը վառէր՝ այդ կրակին մէջն ու շուրջը...

Բ.— Կրօնական հաւատքի ջախջախումը։ Մանաւանդ անոնց, որք ինքզինքնին կառավարելու զրոտակցութեան զուրկ են։ Կրօնա-բարեպաշտական զգացումներ և հաւատարմութեան հարկաւոր են՝ զանոնք բարոյապէս ներխուժեցնելու և անոնց տուող ու բարեբարոյ կեանք մը վարել տալու համար։ Ահաւոր հարուածէն աւելի ուշաթափ քան թէ անհաւատ անձեր կարծեցին թէ կրօնի շահաւատը անբարոյականանալ ըսել է, իբր թէ ուղղամիտ և մաքուր կեանք վարելու են միայն կրօնի համար։

Գ.— Ընտանեկան ցրտութիւնը։ Արդէն յայտնի է որ Ամերիկայի հայերէն խիտ քիչերն են մէկ առ հարիւր— որք ընտանեկան կեանք ունին չուս։ սրտի կապ մը միայն զանոնք հաղորդակից կը պահէր Հայրենիքի մէջ՝ իրենց ընտանեաց հետ։ այդ կապը երեքտարական թիւի մը պէս մայրական խանդաղատանք, հայրական գորով և ամուսնական սէր ու զգումներ կը բերէր իրենց, և կենարար ներշնչումներով և խանդավառ իրաքով իրենց բոլոր սէրը և ուշադրութիւնը կերտեցաւ։

ցած կը պահէր Հայրենիքին վրայ։— Օր մը դառնալ եւ ընտանեաց սիրավառ գրկաց մէջ երջանկանալ... ահա՛ ինչ որ ամուր պարիսպի մը պէս տեղւոյն հայերը կը պահպանէր՝ զիրենք շրջապատող փորձութիւններուն դէմ։

Դ.— Ընկերական դժբաղդութիւններ։ Ամերիկայի Հայոց ընկերական կեանքը միշտ խեղճ եղած է։ Եթէ քեզեցիկ սեռին բարոյացուցիչ ներկայութիւնը անկէ իսպառ բացակայ զանուած է. միայն աղայ մարդիկներէ բաղկացած խումբեր մէկտեղ ընկած են։

Միւս կողմէն և ազնուութեան սարական ներշնչումները հոն մուտ գտած չեն։ Բոլորը նոյն սեռին պատկանող անձեր՝ իրենց բոլոր խօսակցութիւններուն, վարմունքներուն և վերաբերմունքներուն մէջ եղած են անզգոյշ քամահաւ և սանձարձակ։ Երկրորդ. հոյակապ ընդհանուր ընկերակցութիւնները, որպէսին երբեմն էր «Նիւ Եորքի Հոյակապ Միութիւնը», չգոյութեանէ՛ն հայերն իսպառ իրարմէ անջատ դատակարարութեամբ չափանաւար բար առաւել զարգացեալ և ազնուացեալ մասեր սարքեր չըջանակներ կազմած՝ և սասնկով վերջինները առաջիններուն բարութիւնը ու կրթիչ ազդեցութեան զուրկ՝ զերար միշտ վարջ վար քաշած են։ Երրորդ. տեղական ընկերութիւններու ծանօթութեան կամ չփման եկող հայոց ահաբեհի մեծամասնութիւնը, իւր վիճակի բնական բերումով, հանդիպեր է ամենէն ստորին և ապականեալ դատակարարին և անոնց ազդեցութիւնը կրեր է։

Այս ահաւոր վիճակին դարման մը պէտք է. մենք կը հաւատանք որ Ամերիկայի հայութիւնը ունի իր դարմանները, որոնք փրկարար կրնան ըլլալ՝ եթէ գործածուին։ Այդ դարմաններու մասին մեր սեստութիւնները պիտի յայտնենք յաջորդ թուով։

ԳԱՆԻ ՄԸ ԽՕՄԲ ՊՕՂՈՍ ԺՅԻՆՆԵՐԻ

ՏԻ ԳՐԻՍ-ի մէջ անցեալ թուով իմ ինչ պայու ճշգրտութեան մասին գործածներուն իբր հիշարժաւ՝ նամակ մը ստացանք «Ժկրեանի բարեկամք» ստորագրութիւնով, առանց հասցիի և առանց ո՛ր և է անունի։ Այս պարագաներէն գառնելով՝ և այդ նամակին գրեթէ ձեռքբերման մէկ ուրիշ ինքնագիր նամակին հետ բաղդատելով՝ Համոզուեցանք թէ մեզ ուղղուած նամակը գրուած է նոյն ինքն՝ Պօղոս Ժկրեանի կողմէն։

Պօղոս Ժկրեանի գործած մեղադրելի և վատ արարքներուն տեղեկացած ենք իւր մտերիմներէն և խնդրոյն մէջ գտնուող պաշտօնական և շատ պատուաւոր անձնաւորութիւններէ։ Որովհետեւ Պօղոս Ժկրեան ինքզինքը պահած՝ և տեղւոյն հողեւոր հովիւ Արթ. Սող վարդապետի կողմէն մանէ իրեն գրուած պաշտօնական նամակին իսկ պատասխանելէ խոյս տուած է, մենք բացայայտ ճշմարտութիւն մը ծածկելու պարտական չէինք։

Եթէ ձկրեան այս բարոյական անկումը կրած է կնոջ մը խաբեբայ սէրէն, ինչպէս շատ մեծ մարդերու նոյն բանը պատահած է, կիշ կընենք իր ամենէն ազնիւ զգացումներուն՝ եթէ դեռ կան, որ վերականգնելու գերագոյն...

ճիշդ մը թուի։ Իյնչոք փորձանք է. իսկ կանգնելու փորձեր չընելու անձնապատկութիւն է, սճիր է։ Եթէ սյուր հասարակութիւնն է որ զինք կը մեղադրէ, օր մը ինք՝ ձկրեանը ահաւոր կերպով ինքզինքը պիտի դատապարտէ. օր մը ինք պիտի տեսնէ իր անկումը, իր ստորնութիւնը. պիտի անորգէ, պիտի արհամարհէ ինքզինքը և պիտի գանդի, պիտի զգուցի ինք իրմէն։ Հոս է որ անձնապատկութեան եզրակացութիւնը՝ դաժան վիճակ մը տեղի կունենայ։

ՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

ՏԻ ԳՐԻՍ-ը յառաջիկայ թուէն սկսեալ պիտի հրատարակուի Տիրք Սուրէն Սուրէնեանի, Վ. Ծահլեյի և Գ. Պ. Չիթճեանի խմբագրութեամբ, և քանի մը կարող անձանց աշխատակցութեամբ։

Այսօր կը հրատարակենք ՏԻ ԳՐԻՍ-ը վերջին թիւը. յաջորդ թուով նորակազմ խմբագրական մարմինը ինքը պիտի յայտարարէ իր ըրած կարգադրութիւնները մասին, և այնուհետեւ թերթը ճոխ ծրագրով մը և զգուցի փոփոխութեամբ պիտի շարունակուի։

ՆՈՐ ԿԵՆՔ

ՀԱՆՆԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՈՒՆՔԱԿԱՆ

Տարեկան բաժանորդագրին է 2 սուրար. վեցամսեայ՝ 1 սուրար։

Նոր կեանքի Նիւ Եորքի գործակալն է Պրն. Անտոն Թաքարեան, և հասցէն՝ 343 Իսթ 34րդ Փողոց։ Նոր կեանքի բաժանորդներուն «Մարտ» քրի կը զրկուի։

Հօտանի գործակալութեան հասցէն է՝ L, Frank, 309 Ladbroke Grove London W.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ, ԻՐԻՆԵՂԻ



ԿՍՄ ԱԶԳԱՅԻՆ ԷՅՐ ԵՐԿՄԱՐԱՆ Նիւ Եորք, 1899

Հատոր Ա.

Կը պարունակէ 256 էրեաներ և 16 գեղեցիկ պատկերներ։ Տպուած է խիտ ընտիր թղթի վրայ և փառաւոր կերպով կազմուած։ Գիններն են. թղթակազմ (առանց պատկերի) 50 Սէնթ. թղթակազմ՝ 65 սէնթ. լատինակազմ՝ 75 սէնթ. փառապաշտ, մէկ առար. Գիններն կանխիկ են։ Մեծ քանակութեամբ գնողներու համար մասնաւոր գնով կայ։ Գրել, կամ դրամ զրկել առ՝ H. Eguinian, 1163 J St, Fresno, Cal.

Կամ M. T. Fourounjian, 282 Jay St, Brooklyn, New York



